ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան, Շիրակի 88/1 22 ապրիլի 2024թ.

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Միհեր Մազմանյան՝ Գլխավոր իրժեներ
Անդամներ՝
Զարուհի Աղամալյան՝ ՄՌԿ համակարգող մասնագետ
Վահան Հարությունյան՝՝ ՖՏ բաժնի պետ
Տիգրան Սերոբյան՝ ՖՏ բաժնի հաշվապահ
Կարեն Ալեքսանյան՝ Ավտոպարկի հերթափոխի պետ
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումները համակարգող մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2024թ. մարտի 29-ին gnumner.am պաշտոնական կայքում և eauction. am համակարգում:

1.2 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2024թ. ապրիլի 09-ը ժամը 12:00-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գնային առաջարկները.**

10.04.2024թ. «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով հակադարձ աճուրդի ընթացակարգին մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են:

Հ/Հ	Ջ/Տ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին ՀՀ դրամ	Նախնական առաջարկ ՀՀ դրամ			Վերջին առաջարկ ՀՀ դրամ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ	870000	2000000000	20 %	2400000000	725000	20 %	870000	
2	1	«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ	862500	2000000000	20 %	2400000000	718750	20 %	862500	
3	1	«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ	1025000	2000000000	20 %	2400000000	854156	20 %	1024987.2	
4	1	«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ	2500000	2000000000	20 %	2400000000	2083333	20 %	2499999.6	
5	1	«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ	500000	2000000000	20 %	2400000000	416666	20 %	499999.2	

3. **Նիստի կասեցում՝**

«ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արդյունքում պարզվեց, որ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը լրացված է սխալ, բացակայում է էլ. ստորագրությունը, բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /Հավելված 1.3/, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժին/ հստակեցնել մատակարարվելիք ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը/:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվել է շտկել վերոնշյալ տեղ գտած անհամապատասխանությունը և սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ներկայացնել շտկված փաստաթղթերը «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով ընթացակարգի քարտուղարին մինչև նիստի կասեցման ավարտը:

Շտկված փաստաթղթերը ժամանակին չներկայացնելու դեպքում կկիրառվեն վերոնշյալ կարգի 42-րդ կետի դրույթները:

Սահմանված կարգով և ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը:

4. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

Առաջին տեղ ղբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված կարգի պահանջներին:

5. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով Էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

6. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել բոլոր չափաբաժինների մասով **«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին**, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Հանձնաժողովը որոշեց հաստատել էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգում անգործության ժամկետ չկիրառելը՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց սահմանված կարգով ծանուցել «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին և ներկայացնել պայմանագրի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Մ. Մազմանյան

Անդամներ՝ Զ. Աղամալյան

Վ. Հարությունյան

Տ. Սերոբյան

Կ. Ալեքսանյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան